

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇ
ԳԾԵՐԸ *

Յայտնի չէ, թէ ինչ ազդեցութեամբ սակայն դարուս մինչև վերջին կէսերը ուսման ծրագիրը շատ սահմանափակ էր, միակողմանի և տարօրինակ։ Անգղիական նոյն իսկ օրինակելի դպրոցներում՝ միակ դաստանդութեան առարկան հին լեզուների ուսուցումն էր։ Մայրենի լեզու, աշխարհագրութիւն, համարողութիւն, մինչև իսկ ուղղագրութիւն անտես էին արուած։ «18—19 տարեկան ուսանողներ 10 տարի շարունակ նստարանի տախտակը մաշելուց յետոյ մի տող անգամ ուղիղ գրել չէին կարողանում» (Ֆարրար)։

Այսպիսի հանգամանքում՝ ըստ երեւութին անգղիական դպրոցները միայն թերուսներ և տգէտներ պիտի պարգեւէին հասարակութեան, սակայն ամէն բանում ինքն իրեն օգնող անգղիացին այստեղ էլ իւր թերին գիտացել է լրացնել և ուղղել։ Անգղիական դպրոցը իւր ծրագրի թերին ամբողջացնում է շնչելով սէր դէպի ուսումն և ինքնակրթութիւն, որին քիչ չի նպաստում պետական, հասարակական և ընտանեկան կեանքը։ Այսօր արդէն անգղիական դպրոցները շատ առաջ են գնացել և այն էլ ոչ թէ միւս ազգերի դպրոցներից ծրագիր առնելով և բռնի պատուաւստելով, այլ մի կողմից ինքնիշխան պահանջների համաձայն փոփոխելով և միւս կողմից էլ ինքնիշխան շարժումներով։ Այս էլ պիտի ասենք, որ դեռ անգղիական դպրոցը իւր վերջնական կատարելութեան հասցրած ծրագիր չունի, այլ փորձերի շրջանումն է, այստեղից եւնչ մի աշխարհ այնքան զանազան տիպարների դպրոցներ չունի որքան անգղիայում՝ կարելի է տեսնել։ Ակամ Ռոզնի դպրոցից, որ շատ քիչ բանով է տարբերվում հին ձևի ուսումնարաններից մինչև ամենանոր տեսակներ՝ Լոնդոնի համալսարանական Կոլլեճը, բազմաթիւ աստիճանաւորութիւններ կան իրենց բազմակերպ ծրագիրներով։ Դոօնի

դպրոցը հետևող է հին դասական ուղղութեան, գլխաւոր և բոլոր ուսանողների համար պարտաւորիչ առարկան դասական լեզուներն են պատմութեան, աշխարհագրութեան շատ սահմանափակ դասընթաց ունի անգղիական լեզուն ու գրականութիւնը համառօտ են անցնում, գրաւոր աշխատանքները աննշան տեղ են բռնում, եթէ սրա վերայ էլ աւելացնենք ծեծք (բողիկ), այն ժամանակ լրացած կլինի Դոօնի հռչակաւոր դպրոցի նկարագիրը։

Անգղիական միւս նշանաւոր միջնակարգ դպրոցները, որոնք կոչւում են հասարակական, նոյնպէս դասական ուղղութիւն ունեն, նրանցում մեծ յարգի են դասական լեզուները, սակայն նրանք արդէն մի քայլ դէպի առաջ են Դոօնի դպրոցից, նոցա ծրագիրը երկու բաժանմունք ունի, Գրական և Բնական և աշակերտին է թողնուած ծրագրի այս կամ այն բաժանմունքի ընտրութիւնը։ Յիշեալ երկու կարգի դպրոցներից տարբեր են «քերականական» կոչուած դպրոցները, ուր աշակերտները շատ վաղ բաժանուած են խմբերի՝ նայած իրենց ընդունակութեան և նպատակներին։ Այս դպրոցների ծրագիրը շատ ընդարձակ է և զանազանակերպ, սակայն գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է համարողական և բնական գիտութեանց վերայ։ Քերական դպրոցների մի տեսակն էլ իր ծրագրով յարմարացրած է պետական այլ և այլ պաշտօնների համար, զինուորական, ծովային, բժշկական իրաւարանական ևն. ևն։ Արից կարելի է մակաբերել թէ որքան զանազան և բազմակերպ պիտի լինի նըրանց ծրագիրը, կան քեր. դպրոցներ, ուր գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է նոր լեզուների՝ անգղիական, ֆրանսիական, գերմանական, այլ և բնագիտութեան և համարողութեան վերայ։ Սակայն սրանով չվերջացան քեր. դպրոցների տեսակները, Լոնդոնի դպրոցները որ ամէն տեղի և ամէն կարգի կրթական հիմնարկութեանց մի անկարգ խառնուրդ է կազմում։

Առաջին հայեացքով այս խառնուրդը անհողութեան կամ լաւ ևս անտարբերութեան հետեանք կարելի է համարել, սակայն այդ սխալ է։ Անգղիական ազգը ինչպէս դարերի ընթացքում իւր յատուկ կենցաղաւարտութիւնը, պետական

* Սրաւոս յումիս եր. 295։

կարգերը, եկեղեցին ու գրականութիւնն է ըստեղծել անկախ դրսի ազդեցութիւնից, այդպէս էլ այսօր նա հետզհետէ կազմակերպում է իւր [դպրոցի ծրագիրը, յատուկ ազգային պահանջների համեմատ: Անգղիական ազգը անկախական ազատութեան և ինքնաբերական սկզբունքների ներկայացուցիչն է և պաշտպանը, ահա այդ ձգտումը երեւում է և արդի դպրոցական ծրագրի մէջ, ձգտում են ծրագիրը յարմարցնել անհատի ընդունակութեան, հակումներին և ապագայ գործունէութեան: Այս կողմից Լոնդոնի համալսարանական Կոլլէճը ամենից աւելի որոշ ձգտում է յիշեալ նպատակին, նա իւր ծրագրով եզական երեւոյթ է դպրոցական կեանքի մէջ, յիշեալ ուսումնարանում աւանդում են անգղիերէն, լատիներէն, յունարէն, ֆրանսերէն, գերմաներէն, լոկ պատմութիւն, անգղիայի պատմութիւնը, բնական և քաղաքական աշխարհագրութիւն, թուաբանութիւն, գրագրութիւն, հաշուապահութիւն, համարողական գիտութիւն, տեսական և գործնական քիմիա, բնագիտութիւն, բնական պատմութիւն, քաղաքական տնտեսագիտութիւն: «Այլքան առարկաներ և 6 տարուայ դասընթաց» պիտի բացականչէ ընթերցողը անհնար է: Բայց այդպէս չէ: Դպրոցի վարիչները տիրող կարգի հակառակ, աշակերտներին ոչ թէ ըստ հասակի և գիտութեան, այլ ըստ մտաւոր ընդունակութեան և հակումների են բաժանում ամէն մի առարկայի համար: Այնպէս որ աշակերտը համարողական գիտութիւնից բարձր, գերմաներէնից միջին, իսկ աշխարհագրութիւնից ստորին դասատան կարող է պատահել: Այս կարգի շնորհիւ ժամ է ժամ փոխւում է դասարանի աշակերտաց խմբակցութիւնը և իւրաքանչիւր դասի համարեալ դասատան բոլոր աշակերտները գիտութեան հաւասար աստիճանի վերայ են լինում: Պարզ է, որ այսպիսի հանգամանքում անընդունակների և թույլերի թիւը դասատան սաներից դէն է ձգւում, յետ մնացողը կմիանայ իւր ետեւից եկող խմբին, իսկ յառաջագնացն էլ կհասնի առաջինին և ոչ թէ եւրոպական այլ դպրոցների նման ամբողջ տարին դասարանի թիւն դառնալուց յետոյ էլ կրկնաքննութեան շնորհիւ երկրորդ և երրորդ

տարիներն էլ դարձեալ արգելք են դառնում ընդհանուր դասարանի յառաջադիմութեան: Հենց որ երեխան առաջ անցաւ իւր ընկերներից, անց են կացնում յաջորդ դասարան: Այս ուղղութեան մի օգուտն էլ այն է, որ զօրեղ խթան է լինում աշակերտների յառաջադիմութեան և ուսուցչի աշխատանքն էլ աւելի արդիւնաւոր է լինում:

Համալսարանական Կոլլէճի մի ուրիշ հետաքրքրութեան արժանի կոչումն էլ այն է, որ ծնողաց է թողնում զաւակների ուսանելի առարկաների ընտրութիւնը: Թէև դպրոցի տեսուչն էլ ունի իւր veto-ն, որը սահման է դնում ծնողաց ցանկութեան, երբ անյարմար լինի այն կրթութեան գործին, բայց և այնպէս էականը մնում է — ամէն մէկայլ որպէս համաշխարհային կազմում է իւր որդու ուսման ծրագիրը և քայլ առ քայլ հետեւում է նորա գործադրութեանը:

Այս պարզ, բայց և համարձակ կարգն ունի և իւր անյարմարութիւնները, որ ըստ կարելոյն նախատեսնուած և միջոցներ են ձեռք առնուած դժուարութիւնները վերացնելու համար: Դպրոցը ունի խորհրդատու — ուսուցչի պաշտօնը, որ իսկապէս միևնոյն դուռորն է և իւր հսկողութեան տակ 30-ի չափ աշակերտներ ունի: Իւրաքանչիւր աշակերտ, որ դպրոց է մտնում, ընկնում է խորհրդատու ուսուցչի ձեռն, որը վաղօրօք խորհրդակցում է աշակերտի հօր հետ և առաջնորդում է առարկաների ընտրութեան գործում: Արդհետեւ ամէն մի աշակերտ իւր յատուկ ծրագիրն ունի և նստում է իւրաքանչիւր ժամին ըստ իւր գիտութեան այս կամ այն դասարանում: ուստի շատ դժուար կլինէր հսկելու և ստուգելութեան գործը առանձին առանձին հէնց այս պատճառով էլ աշակերտը մանրամասն հաշիւ պիտի տայ իւր դուռորին իւրաքանչիւր քայլի համար, դուռորի վրայ պիտի նայի, ինչպէս իւր խորհրդատուի ու բարեկամի վերայ, և սա էլ պատասխանատու է իւր սանիկի թէ յառաջադիմութեան և թէ բարեբարոյ վարքի համար դպրոց ընդունած օրից մինչև նորա նստարանը թողնելու բոլորն:

Այս տեսակի դպրոցներ հետզհետէ բացւում են մեծ Բրիտանիայի զանազան քաղաք-

ներում՝ Գառառուում, Սոմերիտաում և ինչ:

Գ.

Մի բան որ զարձակ ընդ հանուր է անգլիական միջնակարգ դպրոցների համար, այդ թե՛ հաստատուն ու հիմնաւոր սակայն սահմանափակ և բաւականին աղքատ տեղեկութիւն է տալիս: Անգղիացի վաճառական ժողովուրդ է, աշխատում է ըստ կարելոյն շուտով օգտուել կրթութիւնից և շատ վաղ մասնաւորում է իւր որդու կրթութիւնը: Տասնը-հինգ տարեկան պատանին արդէն որոշ ասպարէզի համար է պատրաստուում և ըստ այնմ ուղղում կրթութեան գործը և դպրոցից ուղիղ օտ է դնում գործնական կեանքի մէջ, վախճանալով աւելորդ ժամանակ կորցնել դպրոցում: Նայն իսկ Անգղիացի վաճառականը նախապատուութիւն է տալիս 14 տարեկան կիսաւարտին որին շատ հեշտութեամբ կարելի է թեքել ըստ պահանջի: Ահա այս է պատճառը որ անգղիական դաւառական համալսարանական կոլլէճները բարձրագոյն արհեստական դպրոցներ են և աշակերտների մեծ մասը արհեստաւորներ, որոնք ձգտում են ձեռք բերել իրենց արհեստին յատուկ պատրաստութիւն: Շատ քչերը, յատկապէս ազնուական դասին պատկանող ուսանողներն են, որ շարունակում են իրենց ուսումը մինչև 18 տարեկան հասակը և ահագին քանակութեամբ միջնակարգ դպրոցները աւարտողներից միայն շատ աննշան թուով անձինք 2—3 հազար մտնում են համալսարան:

Իսկապէս այս շատ վատ ազդեցութիւն պիտի ունենար երկրի յառաջադիմութեան գործի վերայ և Անգղիան շատ շատ սեռութիւններից յետ պիտի մնար իւր գիտութեամբ և գրականութեամբ, սակայն այդպէս չէ: Անգլիան տուել է և տալիս է շատ հանձարեղ գիտնականներ, որոնք պատկանում են ամենից մեծ ինքնուրոյն հանձարների դասին: Ինչն է սրա պատճառը:

Թէ՛ և այսպէս անբաւարար է երևում միջնակարգ դպրոցների կրթութեան դիբբը, սակայն անգղիացին մտաւոր գործունեութիւնը պահպանում է այն հաստատուն համոզմամբ, որ ամենայն կեանքում մարդ պիտի սովորի: Անգղիա-

յում համար երբեք ուշ չէ ուսանելը: Թող 15 տարեկան թողնի դպրոցը թե՛ 22 տարեկան աւարտի համալսարանը, դպրոցական դասընթացի վախճանը կրթութեան վախճան չէ: Երկտասարդ անգղիացին դպրոցից դուրս գալիս քիչ բան է իմանում նա իրեն ամենապէս չի կարծում, բայց մի այնպիսի վառ սէր է տանում իւր հետ դպրոցից, որ ամբողջ կեանքում չի սառում և մի հասարակական կեանքում որին երբեք չի դաւաճանում: Վառ սիրոյ և հաստատուն համոզման հետ դպրոցը տալիս է անբաւարարութիւն ուսումնասիրութեամբ և գիտութեամբ պարտաւելու: Անգղիացուն անձանթ է ուղեղի յոդնածութիւն, որովհետև նա կեանքն ու համբերութիւնը չի մտնում ընդարձակ ու համապիտութեան ձգտող ծրագրի վերայ, անգլիական միտքը ծանր, բայց հաստատութեամբ է առաջ գնում: Անգղիական դպրոցը միշտ ուղղում է իւր սանիկի միտքն ու կամքը դէպի որոշ գիտութիւն և միջոց տալիս ծանօթանալ դրան վերաբերեալ գրականութեան: Այդ է պատճառը, որ անգղիացին ինչ ասպարէզ էլ ընտրի գիտութեամբ զբաղուելը իւր կեանքի անհրաժեշտ պայմաններից մինն է համարում: Այսպէս ուրեմն անգղիական միջնակարգ դպրոցների բնորոշ գծերից մինն էլ այն է, որ հաստատում է աշակերտի մէջ անսխալ և անփոփոխելի և անփոփոխելի գիտակցութիւն, այլ իբր հաստատուն և գործունեայ կամք: Այժմ տեսնենք ինչ միջոցներով հասնում է դպրոցը իւր նպատակին:

Միջոցը շատ պարզ է և հանրամատչելի անգղիական ազգի համար—դպրոցը արբիւս է և հիպոթէզ է ընտանեկան և հասարակական կենաց, ինչ որ ընտանիքի մէջ պահանջ է սկզբունք է, դպրոցը յփոստ է նպատակ և զարգացել: Ընտանիքի ինչպէս և դպրոցի գլխաւոր նպատակն է զարգացնել մանկան մտաւոր և մարմնական ոյժերը, ներշնչել մանկան մէջ վստահութիւն դէպի իր անձնական կարողութիւնը, վարժեցնել ձեռներեցութեան, վառ պահել գործունեութեան սէրը:

Անգղիական դպրոցը իւր սանիկին երբեք չի վարժեցնում վաղիկութեան, այլ որքան կարելի է ընտելացնում է պարզ և չարքաշ կեան-

քիւ. քիչ են պարապմանց ժամերը, երկար բաց օրում անցկացնելու վարժութիւնները զանազան խաղեր, մարմնամարզութիւն և ֆիզիքական աշխատանք փոխարինում են մտաւոր պարապմանց՝ մանաւանդ մանկան մատաղ հասակում, ըստ կարելոյն դպրոցը յարգում է իւր սանիկի անհատական ազատութիւնը, նոյն իսկ մի տեսակ պահանջ է դնում ամէն մի աշակերտի վերայ, որքան կարելի է շուտ իւր հոգւր ինքը քաշի ինքն իրեն պահպանի: Մի խօսքով ոչ թէ դպրոցը ձգտում է որքան կարելի է շատ տեղեկութիւններ ու տեսութիւններ խճողել իւր սանիկի գլուխը և շարունակ ձեռքից բռնած ման ածել սկսած առաջին բաժանմունքից մինչև 6-րդ կամ 8-րդ դասարան և թուլացած մկաններով, յոգնած ուղեղով և անտարբեր սրտով և ամենադէտ յաւակնութեամբ կեանք բաց թողնել, այլ նորա ամենից առաջին և գլխաւոր նպատակն է տալ հասարակութեան հոգւով և մարմնով դրեզ, կայտառ երիտասարդներ և պատանիներ, ծառաւի գործունէութեան, մրցելու և դժուարութիւններ յաղթելու և ոչ թէ քննութիւններով և վերաքննութիւններով աշակերտների կենսական ոյժերը քամել:

Անգղիական դպրոցի ազդեցութիւնը և միևնոյն ժամանակ առաւելութիւնը շատ գեղեցիկ երևում է Նիկիտիկի բերած մի համեմատութեան մէջ, որ աւելորդ չի լինի կրկնել այստեղ: Երկու Փրանսիացի քայրեր, որոնցից մինը անգղիացու հետ էր ամուսնացել, ամուսը անց են կացնում Ֆրանսիայում, մի գիւղում: Երկուսն էլ ունեն որդիք, որ յաճախում են մերձակայ գիւղի դպրոցը: Անգղիացի մանուկը 10 տարեկան մենակ է դնում զալիս և առանց դժուարութեան իր գրքերն ու պաշարն ինքն է տանում: Իսկ Ֆրանսիացի երկու եղբայրները մինը 10, միւսը 11 տարեկան, առանց ծառայի վախենում են դպրոց գնալ ինչ խօսք որ ծառան ոչ միայն երկու մանուկների ձեռքից բռնած տանում բերում է, այլ և գրքերն և պաշարը ինքն է վերցնում, պարզ է որ այդպիսի ուղղութիւն ներշնչող դպրոցը պիտի կարենայ տալ պետութեան այնպիսի անձինք, որոնք իրենց ամբողջ կեանքում տոկուն ու յարատեւ աշխատութեամբ ոչ միայն զըպ-

րոցի պակասը լրացնեն, այլ և ներկայացուցիչ լինին գիտութեան, արուեստի և գրականութեան: Մնում է այժմ մատնանիշ անել երկու դարձեալ բնորոշ կողմերի վերայ, որով անգղիացի միջնակարգ դպրոցները աչքի են ընկնում:

Անգղիայում դպրոցը իւր գոյութեամբ ըստ մեծի մասին ոչ թէ պետութեան, այլ անհատի գործ է: Մի կամ մի քանի եռանդուն անձինք դրում են դպրոցի անհրաժեշտութիւնը, այնուհետև դժուար չէ հետաքրքրել և համոզել հասարակութեան լրագրի և ժողովների միջոցով: Կազմում են ընկերութիւն, բաց անում ստորագրութիւն և թէքում հասարակութեան կարծիքը, յետոյ հաւաքում են դրամ, և արդէն գործը գլուխ է դալիս: Այն ժամանակ ընտրում են մի քանի դործին հմուտ և անձնուէր մարդիկ և քայլ առ քայլ յառաջ վարելով՝ և պահանջներին բաւարարութիւն տալ ձգտելով՝ կազմում են նորա ծրագիրը, սահմանում կարգեր և ներքին և արտաքին յարաբերութեանց կանոններ, հրաւիրում ուսուցիչներ, և դպրոցը սկսում է անսայթաք յառաջ ընթանալ: Այսպէս են յառաջ եկել Անգղիայի շատ դպրոցներ և այսօր էլ այդ եղանակով բազմանում են: Այն ինչ եւրոպական մայր ցամաքում դպրոցներ հիմնողը, ծրագիրներ մշակողը, կարգեր, նոյն իսկ դասագրքեր ընտրողը պետութիւնն է: Անգղիայում էլ դպրոցը պետութեան հոգսերից մինն է կազմում, սակայն հիմնովին տարբեր կերպով է յառաջ վարում կրթական գործը: Պետութիւնը ըստ կարելոյն յարգում է անհատի ինքնիշխանութիւնը: Նա ժողովրդական կրթութեան գործին սկզբում ամենեւին չէր միջամտում, այդ թողիկ էր անհատների և ընկերութեան ջանքին և ճշմարտութեան: Այսօր իսկ նա բոլորովին այլ կերպ է մասնակցում ժողովրդական լուսաւորութեան գործում, նա մասնակցում է ինչպէս օրէնստու, կանոնադրելով արդէն գլուխ բերուած գործը, ինչպէս կառավարութիւն հրակելով և ինչպէս հասարական գանձապահ նրա պատաներ մատակարարելով: Այսպէս ուրեմն Անգղիան անհատականութեան աշխարհ է առանձին անձանց կամ ընկերութեանց ձեռնե-

բեցութեան և գործունէութեանց ասպարէզ: Դպրոցներն էլ նոյն կերպ են յառաջ գալիս և բազմանում առանց ձգտելու միօրինակութիւն և ծրագիրների միութիւն պահպանել: Նոքա կանգ չեն առնում նոյն իսկ ակնյայտի անկարգութեան առաջ, միայն թէ դպրոցական հիմնարկութիւնը յառաջ եկած լինի ուղղակի կեանքից, բաւականութիւն տայ հասարակութեան հասունացած պահանջներին: Այս պահանջը սուրբ է և պետութեան համար, ահա թէ ինչու նա դպրոցական գործում հնարաւոր եղած ազատութիւնն և անկասկածութիւնը շնորհել է դպրոցներին: Պետութիւնը դրամական օգնութիւնը հինգ տեսակի է բաժանել: 1) Նայած աշակերտների թուին և իւրաքանչիւր քննութեան առարկայի համար, այստեղ փողի քանակը փոփոխում և յառաջագիմութեան թուանշանների համեմատ: 2) Նրպաստներ դպրոցական շէնքեր կանգնեցնելու համար: 3) Նպաստներ դպրոցական իրեր և գրքեր գնելու համար: 4) Նպաստ ուսանողներին: 5) Նպաստ առհասարակ այն դպրոցներին, որոնք իրենց կազմակերպութեամբ կատարելապէս համապատասխան են գիտութեանց և արուեստի ծրագրին: Այստեղ էլ վերջապէս է պետութեան միջամտութիւնը:

Ահա անգղիական դպրոցների այն համառօտ նկարագիրը որ կարելի է քաղել Լեկկիսկի գրքից և որը բաւական է ցոյց տալու համար, թէ որչափ տարբեր են Եւրոպայի մայր ցամաքի դպրոցներից և թէ ինչ հետեանքի է հասցնում այդ տեսակ կրթութիւնն ու դաստիարակութիւնը:

Ս. 6.



ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԱՄ ԿԱԹՈՒԿ ԿԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

Համառօտաբար ներկայացնում ենք այստեղ արևելեան վանականութեան ուրուագիծը և նրա բնորոշ առանձնայատկութիւնները ցոյց տալու համար պատմական կեանքում արև-

մտեանի՝ նրանից ունեցած մեծ տարբերութիւնը: Քրիստոս և Պողոս առաքեալը վանականութիւն չեն քարոզել և իրենք իբր վանական չեն ապրել: Առաջին դարու քրիստոնեաները զոհողութեան և Քրիստոսի երկրորդ դալատեան քաղաքարով ոգևորուած կարծում էին, որ հեթանոսութեան նրա կրօնի և պետութեան մէջ իշխողը սատանան է: Նոքա զիտէին որ երկիրս Աստուած է ստեղծել և կառավարում, բայց մտածում էին, որ նա ժամանակաւորապէս սատանայի աւերման է ենթարկուած: Նոքա հաւատում էին նաեւ, որ այդ սատանայական աշխարհը շուտով դատաստանի պիտի ենթարկուի այդ պատճառով ևս ժամանակակից քրիստոնէութիւնը՝ խիստ կռիւ էր մղում հեթանոսական աշխարհի կոպիտ և նուրբ զգայականութեան դէմ: Քրիստոնէութիւնը իւր ամբողջ եռանդը գործադրում էր ուսուցանելով հեթանոսներին թէ նոքա «կենդանիներ չեն, այլ անմահ ոգիներ, ո՛չ թէ մարմնի և նիւթի գերի, այլ նրանց տէր և միայն կենդանի Աստուծոյ ծառաներ»: Եւ իսկապէս մինչև որ քաղաքակրթական այս իդէալը չհասկացուի մնացած գաղափարները պէտք է յետ մղուին: Ամուսնութիւնը ուտել խմելը վատ չէ, մարմինը նոյնպէս սուրբ է, բայց մարդն ինքն ապականում է նրանց իւր զգայականութեամբ: Հեթանոսութիւնից շատ աւելի հզօր մի սազնապ (կրօն) պատրաստեցին եկեղեցուն Գնոստիկեանները և Մարկիոնականները իրենց երկուութեամբ (զուլալիզմ): Առաջինը քարոզում էր հոգիների բարի Աստուծուց զատ, նրա արդեան յաւիտենական նիւթի մասին և թէ մարդկային հոգին՝ աստուածային այս կայծը, իւր թշնամուց՝ զգայականութիւնից յաղթուած, բռնուած, բանտարկուած էր մարմնի մէջ: Նա միայն մարմնի մահից յետոյ կարող էր ազատուել, իսկ վերջինս կենդանութեան ժամանակ կատարեալ ձգնութիւնը—ձանաչողութիւնը կամ դիտութիւնը (γνῶσις), կարող էր հոգիների սկզբնական աղբիւրի և նոցա մէջ՝ ներքին կապ պահել: Նոյն խնդիրներն էր շօշափում մարկիոնականութիւնը իւր գործնական պատուերներով:

Եկեղեցին յաղթեց այս երկուութեանը